

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն						
NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7
1	Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական առաջնահերթությունների/գերակայությունների սահմանում, ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացում	1.1 «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի 2022-2026 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Հաստատված ռազմավարության առկայություն, որտեղ կամրագրվեն առաջիկա 5 տարիների սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման հիմնական գերակայությունները/ առաջնահերթությունները, նպատակները, դրանց հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև զարգացման խոչընդոտները և հիմնական ռիսկերը:		2022 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
2	Աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների պարզեցում և	2.1 «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	1. Վերանայված են աշխատանքային օրենսդրության, մասնավորապես.	Էկոնոմիկայի նախարարություն	2022 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

<p>բարելավում՝ համապատասխանեցնելով նաև ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների պահանջներին, աշխատանքային վեճերի լուծման ճկուն մեխանիզմների ներդրում, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողության գործիքակազմի ընդլայնում և բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացում և խորացում</p>	<p>մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>1) սոցիալական գործընկերությանը և կոլեկտիվ պայմանագրերին (կոլեկտիվ բանակցությունների վարման ընթացակարգերի հստակեցում, սոցիալական գործընկերության ինստիտուտի դերի կարևորում)  2) արհմիությունների դերին (արհմիությունների դերի բարձրացման նպատակով արհմիությունների լիազորությունների վերանայում, աշխատողների ներկայացուցչական մարմիններում ընտրված աշխատողների պաշտպանվածությանը վերաբերող կարգավորումների նախատեսում)  3) գործադուլին (գործադուլ կազմակերպելու և գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունմանը վերաբերող կարգավորումների վերանայում, գործադուլի իրավունքը միայն կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ չպայմանավորելու կարգավորումների նախատեսում)  4) ամենամյա արձակուրդներին (ամենամյա արձակուրդի իրավունքի իրացման համար գործուն մեխանիզմների ամրագրում)  5) աշխատանքային պայմանագրի կնքմանը (կնքման այլընտրանքային եղանակների նախատեսում) և բովանդակությանը (բովանդակության մեջ ներառվող պարտադիր</p>			
---	--	---	--	--	--

			<p>պայմանների շրջանակի վերանայում)</p> <p>6) երեխաների աշխատանքին վերաբերող (մասնավորապես՝ աշխատանքային ժամերի տևողության վերանայում), ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումները:</p> <p>2. Կարգավորված են իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները, այդ թվում՝ սահմանված է որոշակի խմբերի (հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացողի կամ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, հարազատ եղբայր, տատ, պապ) համար աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում աշխատանքում մնալու նախապատվության իրավունքը, ընդլայնված են երեխա ունեցող աշխատողների իրավունքները (ավելի կարճ ժամերով աշխատելու հնարավորության նախատեսում, իրենց կարգավիճակով պայմանավորված տրամադրվող ընդմիջումների օգտագործման ճկուն մեխանիզմների սահմանում),</p>			
--	--	--	--	--	--	--

		<p>նախատեսված են աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացմանը և արտադրողականության խթանմանն ուղղված կարգավորումներ (աշխատողների մասնագիտական ուսուցման կազմակերպման համապարփակ կարգավորումների նախատեսում):</p> <p>3. Բարելավվել են աշխատող-գործատու հարաբերությունները՝ աշխատանքային հարաբերությունների կարգավորումների պարզեցման արդյունքում:</p>			
	<p>2.2 Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» շրջանակներում՝ ԵՄ հրահանգների պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխանեցման նպատակով համապատասխան իրավական ակտերն ընդունված են</p>	<p>ՀՀ աշխատանքային օրենսդրության կարգավորումները համապատասխանեցված են ԵՄ այն հրահանգների պահանջներին, որոնց մասով համապատասխանեցումները պետք է իրականացվեն 2025 թվականին:</p>		<p>2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
	<p>2.3 Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և ֆինանսական գնահատականի վերաբերյալ վերլուծության ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման համար նախընտրելի մոդելի վերաբերյալ առաջարկությունը և մոդելի ներդրման համար պահանջվող ֆինանսական</p>	<p>Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p>	<p>2022 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսական դոնոր կազմակերպություններ</p>

		<p>միջոցների գնահատականը առկա են:</p>				
<p>2.4 Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և ֆինանսական գնահատականի վերլուծության արդյունքները հաշվի առնելով՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման համար 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կամ ծրագրի ընդունումից հետո շահագրգիռ քննարկումների արդյունքներով պետական բյուջեից համապատասխան միջոցների տրամադրման հնարավորության պարագայում՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրմանն ուղղված օրենքներին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>Հնարավոր է դարձել աշխատանքային իրավունքների պաշտպանությունն առանց դատական գործընթացների՝ հնարավորինս կարճ ժամկետներում և առանց հավելյալ ծախսերի:</p>	<p>Արդարադատության նախարարություն  Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ  Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p>	<p>2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>		
	<p>2.5 «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>1. Սահմանված են կարգավորումներ՝ ուղղված գործուն արհեստակցական միությունների ձևավորմանը, որոնք արդյունավետորեն կհամագործակցեն նաև գործատուների հետ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում: 2. Արհեստակցական միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն  Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p>	<p>2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	

			<p>համապատասխանեցված է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին: Մասնավորապես, նախատեսված են կարգավորումներ, որոնք հնարավորություն կստեղծեն ճյուղային, տարածքային և հանրապետական մակարդակներում մեկից ավելի միությունների ներկայացվածության համար, ինչը բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման համար համապատասխան հիմքեր կապահովի:</p>			
		<p>2.6 «Գործատուների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>1. Սահմանված են կարգավորումներ՝ ուղղված գործատուների գործուն միությունների ձևավորմանը, որոնք արդյունավետորեն կհամագործակցեն նաև արհմիությունների հետ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում:</p> <p>2. Գործատուների միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը համապատասխանեցված է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p>	<p>2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

			խարտիա) պահանջներին: Մասնավորապես, նախատեսված են կարգավորումներ, որոնք հնարավորություն կստեղծեն ճյուղային, տարածքային և հանրապետական մակարդակներում մեկից ավելի միությունների ներկայացվածության համար, ինչը բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման համար համապատասխան հիմքեր կապահովի:			
3	Պետական հատվածի աշխատողների սոցիալական երաշխիքների ընդլայնում	3.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	1. Սոցիալական փաթեթի շահառուների շրջանակի ընդլայնում, որի արդյունքում՝ սոցփաթեթի իրավունք կունենան նաև՝ 1) սոցփաթեթի շահառու կազմակերպությունների կազմակերպատիրավական ձևի (պետական ոչ առևտրային կազմակերպությունից հիմնադրամի վերակազմակերպված) փոփոխությամբ պայմանավորված սոցփաթեթի իրավունքից զրկված շուրջ 299 անձինք, 2) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների, մարզաքոլեջի, մանկապատանեկան մարզադպրոցի և կրթության, սպորտի ոլորտի այլ հաստիքային աշխատողներ (ընդհանուր՝ շուրջ 6507 շահառու), 3) համալսարանների կազմում ներառված ավագ դպրոցների	2025 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ	2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով համապատասխան հնարավորության առկայության դեպքում՝ ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ կպահանջվի 537,552.0 հազ դրամ (7466 շահառուի համար)	

			<p>շուրջ 245 հաստիքային աշխատողները, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ պետական քաղաքական, պետական վարչական և այլ պաշտոնատար (ընդհանուր շուրջ 415) անձինք:</p>		
4	<p>Կամավորության մշակույթի տարածման և խրախուսման նպատակով՝ կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը կարգավորող միասնական իրավական մեխանիզմների ամրագրում</p>	<p>4.1 «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող ՀՀ մի շարք օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Ամրագրված են կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի ամբողջական և միասնական, կամավորի ինստիտուտի կայացման և կամավորության մշակույթի զարգացման և տարածման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներ:</p>	<p>2022 թվականի մարտ 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
		<p>4.2 Կամավորական դաշտը կարգավորող տեղեկատվական հարթակի (կայքի) շահագործում՝ 2024-2026թթ. միջնաժամկետ ժամանակահատվածի ծախսային ծրագրով համապատասխան հնարավորության առկայության պարագայում</p>	<p>Ինչպես քաղաքացիները, այնպես էլ՝ կամավորական գործունեություն իրականացնող և կամավոր աշխատանք կատարող անձինք պարբերաբար հնարավորություն կունենան պաշտոնական աղբյուրից տեղեկացված լինելու առկա օրենսդրական կարգավորումների վերաբերյալ, ինչպես նաև կձևավորվի ճկուն հարթակ, որտեղ կապահովվի կապ՝ կամավորների և կամավորներ ներգրավելու կարիք ունեցող մարմինների կամ կազմակերպությունների միջև:</p>	<p>«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում</p>	<p>Քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի միջոցների շրջանակում համապատասխան գումար նախատեսելու հնարավորության հարցը (կայքի ամբողջական մշակման, բովանդակության տեղադրման, տեխնիկական շահագործման աջակցման, անվտանգային սերտիֆիկատի ապահովման, դոմեյնի գնման և</p>



						տեխնիկական աջակցման համար անհրաժեշտ կլինի 1,5-3 մլն դրամ)
5	Նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացում՝ հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները	5.1 2025-2027 պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի քննարկման արդյունքներով նվազագույն աշխատավարձի բարձրացման համապատասխան հնարավորության առկայության պարագայում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	1. Կբարձրանա նվազագույն ամսական աշխատավարձի չափը, որը կնպաստի՝ 1)աղքատության կրճատմանը, 2)նվազագույն և միջին աշխատավարձերի միջև հարաբերակցության նվազմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: 2. Մինչև 2026 թվականը նվազագույն ամսական աշխատավարձի չափը սահմանված է 85 000 դրամ:		2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի միջոցների շրջանակում համապատասխան գումար նախատեսելու հնարավորության հարցը
6	Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և արդյունավետության բարձրացում, ըստ անհրաժեշտության, նոր ծրագրերի ներդրում, երեխա ունեցող ծնողների համար աշխատանքը և երեխայի խնամքը համատեղելու համար	6.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Զբաղվածության պետական ծրագրերը իրականացվում են առավել հասցեական, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների կարգավորմամբ բարձրացել է ծրագրերի արդյունավետությունը, ըստ անհրաժեշտության, ներդրված են աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց		2022 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

	<p>առավել լայն հնարավորությունների ստեղծում Զբաղվածության ոլորտում մատուցվող ծառայությունների բարելավում և շրջանակի ընդլայնում</p>		<p>մրցունակության բարձրացմանն ուղղված, կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունները խթանող նոր ծրագրեր:</p>			
		<p>6.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի N 1326-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրման միջոցառման իրականացում նաև 2022 թվականին դիմում և թափուր աշխատատեղի հայտ ներկայացրած գործատուների հետ: 2022 թվականին շուրջ 200 նախկին զինծառայող ևս միջոցառման միջոցով աշխատանքի տեղավորման հնարավորություն կստանա:</p>		<p>2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեից նախատեսվող ֆինանսավորման չափերը կճշգրտվեն՝ ելնելով տվյալ տարվա պետական բյուջեով այդ նպատակների համար նախատեսված գումարներից</p>
7	<p>Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման և աշխատուժի ձևավորման համընդհանուր համակարգի զարգացում</p>	<p>7.1 Հանրակրթական համակարգում մասնագիտական կողմնորոշման կարողությունների զարգացում և մեթոդական աջակցություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված շուրջ 1500 մանկավարժները վերապատրաստված են արդի և ապագա աշխատաշուկայի պահանջարկին ներկայացվող տեխնոլոգիաներով և ստանում են շարունակական մեթոդական աջակցություն և խորհրդատվություն:</p>	<p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p>	<p>2026 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե Դոնոր կազմակերպություններ</p>

		7.2 Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրում	Միասնական սոցիալական ծառայությունների բոլոր 49 տարածքային կենտրոններում առկա են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայություններ իրականացնող համապատասխան վերապատրաստում անցած մասնագետներ:		2022 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ	
		7.3 Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ներդրում	Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող բոլոր հաստատություններում ներդրված են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայություններ, առկա են համապատասխան վերապատրաստում անցած մասնագետներ:		2022թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	
		7.4 Նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՆՄԿՈՒ) հաստատություններում ներդրված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների զարգացում	Ֆորմալ կրթության բոլոր մակարդակներում շարունակվելու են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման համընդհանուր համակարգի ներդրման աշխատանքները՝ հիմնված արդի և ապագա աշխատաշուկայի պահանջների վրա: Մասնավորապես, Հանրապետության բոլոր 96 ՆՄԿՈՒ հաստատություններում նախապես մշակված և կիրառման մեջ փորձարկված մշտադիտարկման չափորոշիչներով գնահատված են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների արդյունավետությունը:	«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2021-2022 թվականներ	«Կետական բյուջե

8	Քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավում և մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարձրացում	8.1 «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	1. սոցիալապես անապահով, աղքատ ընտանիքների սոցիալական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների բազմազանության և դրանց տրամադրման համար անհրաժեշտ իրավական հենքը ձևավորված է:	2022 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված աղբյուրներ
			2. սոցիալական աշխատանքի ստանդարտները հաստատված են	2025 թվականի փետրվարի 3-րդ տասնօրյակ	
			3. առկա է սոցիալական պաշտպանության ոլորտի սոցիալական աշխատողների շարունակական վերապատրաստումների մեխանիզմ:	2025 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ	
	8.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 10.05.2015թ. N 1061-Ն և 30.01.2014թ. N 145-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	Ընտանիքի սոցիալական (անապահովության) գնահատման նոր համակարգը գործարկված է, գնահատման բնութագրիչները վերանայված են, ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների նշանակման և վճարման ընթացակարգերը հստակեցված են, ներդրված են աղքատության փոխարին հաղթահարման մոդելներ	2023 թվականի սեպտեմբերի 3-ին տասնօրյակ		
	8.3 «Կացարանի կարիք ունեցող ընտանիքների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը պետական աջակցություն տրամադրելու նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Մշակվել է սոցիալական հիփոթեքի համակարգը՝ յուրաքանչյուր տարի որոշակի սոցիալական խմբերին դասված ընտանիքների համար կեցության արժանապատիվ պայմաններ ստեղծելու համար	2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ		Ֆինանսավորում չի պահանջում

		<p>8.4 «Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարությունը և հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>Առկա են ցածր եկամուտներ ունեցող, ինչպես նաև անապահով ընտանիքներին և խոցելի այլ խմբերին մշտական կամ ժամանակավոր կացարաններով ապահովման մեխանիզմներ և բնակարանով ապահովման միասնական սոցիալական քաղաքականություն</p>	<p>Քաղաքաշինության կոմիտե</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	<p>2025 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	
		<p>8.5 Սոցիալական պաշտպանության համակարգի՝ ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման, դիմակայունության մեխանիզմների ներդրում</p>	<p>1. սոցիալական շտապ օգնության համակարգն ամբողջությամբ գործարկված է</p> <p>2. սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգում ներառված է ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման մեխանիզմների ծրագրային փաթեթը</p> <p>3. ներդրվել է սննդային քարտերի համակարգ, որը գործում է հանրապետության ողջ տարածքում</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p>	<p>2025 թվականի փետրվարի 1-ին տասնօրյակ</p> <p>2025 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p> <p>2025 թվականի փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	
		<p>8.6 «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխման ռազմավարությունը և միասնական սոցիալական ծառայության զարգացման հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>1. սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգը գործարկված է, մշակված է ընտանիքի սոցիալական գնահատման ենթահամակարգի բովանդակային նկարագիրը</p> <p>2. միասնական սոցիալական ծառայության շենքային պայմանները բարելավված են և տարածքային կենտրոնները տեխնիկապես վերազինված են</p>		<p>2025 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p> <p>1. 2022 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2. 2022 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀԲ</p> <p>աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության 2-րդ ծրագիր՝ 1,751,398,100 դրամ (որից՝ 1,424,709,100 դրամ վարկ, իսկ 326,689,000</p>

			<p>3. միասնական սոցիալական ծառայության բոլոր սոցիալական աշխատողները անցել են մասնագիտական վերապատրաստումներ</p> <p>4. առկա է միասնական տեղեկատվական համակարգ, ծառայությունների տրամադրման ընթացակարգերը պարզեցված և ավտոմատացված են</p>		<p>3. 2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>4. 2026 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>դրամ՝ համաֆինանսավորում) և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
9	<p>Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավում և համայնքահեն ծառայությունների ներդրում, զարգացում և ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի կատարելագործում</p>	<p>9.1 Սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող և դրանցից դուրս գտնվող տարեցների սոցիալական կարիքների գնահատում</p>	<p>1. Գնահատված են 1000 տարեցի սոցիալական կարիքները</p> <p>2. Կազմված է տարեցներին մատուցվող ծառայությունների ցանկը</p> <p>3. Մինչև 2023 թ. ստեղծված են՝  1) ցերեկային կենտրոններ հանրապետության բոլոր մարզերում՝ յուրաքանչյուրն՝ առնվազն 50 այցելուի հաշվարկով  2) ճգնաժամային 3 կենտրոն՝ յուրաքանչյուրն առնվազն 20 տարեցի հաշվարկով  3) ընդլայնել տնային խնամքի ծառայությունները՝ հանրապետության բոլոր մարզերում, ներդնելով նաև՝ ամենօրյա խնամքի ծառայություններ տնային պայմաններում</p>	<p>Առողջապահության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջում</p>
		<p>9.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և</p>	<p>1. Հստակեցված և տարանջատված են տարեց անձանց մատուցվող ծառայությունների ձևերն ու տեսակները՝ ըստ շահառուների խմբերի և կարգավիճակների,</p>		<p>2023 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ</p>	

		<p>լրացումներ կատարելու մասին» և «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի հիմնական սկզբունքները և ծառայությունների ու հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>պարզեցված է խնամքի տրամադրման գործընթացը</p> <p>2. սահմանված են տարեցներին մատուցվող խնամքի և սոցիալական այլ ծառայությունների համար անհրաժեշտ չափորոշիչներն և ծառայություններ մատուցող մասնագետների հաստիքային միավորների չափաքանակները</p>			
		<p>9.3 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>Տարանջատված և սահմանված են անօթևան մարդկանց կացարանով ապահովման երեք տիպի ծառայություն՝ ժամանակավոր օթևան (կացարան), մասնագիտացված կացարան (հիմնականում ունեն երկու ուղղվածության՝ տուբերկուլյոզ և (կամ) սեռավարակներ (այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ունեցող և հոգեկան առողջության խնդիրներ (ծերունական թուլամտություն, դեմենցիա, փսիխոզ, հոգեկան առողջության և (կամ) մտավոր խնդիրներ) ունեցող անօթևան անձանց համար) և ընդունիչ-ախտորոշիչ կենտրոն, որը հանդիսանում է մյուս ծառայությունների միջև միջանկյալ օղակ և նախատեսված է անձի ինքնությունը չպարզված, ակնհայտ ոչ ադեկվատ վարքագիծ դրսևորող, կասկածելի հոգեկան առողջությամբ անօթևան անձանց հրատապ սոցիալական</p>		<p>2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p>	

			աջակցություն տրամադրելու համար:			
10	Հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումների բացառում, հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի ապահովում	10.1 «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում, օրենքի կիրարկման ապահովում: Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների, սոցիալական ներառման և անկախ կյանքի ապահովում, համայնքահեն ծառայությունների ներդրում և ընդլայնում:		2022 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		10.2 «Իսելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովում, հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումների բացառում:	Քաղաքաշինության կոմիտե	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	
		10.3 «Պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող սոցիալ-վերականգնողական ծառայությունների հզորացում, ծառայությունների մատուցման նոր մեխանիզմների ներդրում:		2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	
11	Հաշմանդամության գնահատման նոր մոդելի կիրարկման ապահովում	11.1 «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ	Անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա հիմնված հաշմանդամության գնահատման նոր մոդելի առկայություն, գնահատման գործընթացի թվայնացում	Առողջապահության նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում



		կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ				
		11.2 «Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչներն ու գործիքները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա հիմնված հաշմանդամության գնահատման նոր մոդելի առկայություն, գնահատման չափորոշիչներ հաստատում		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	
		11.3 «Ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24 N-ի 1535-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ	Անձի կարիքների բազմակողմանի գնահատման հիման վրա ծառայությունների որոշարկման մեխանիզմների կատարելագործում:		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	
12	Երեխաների իրավունքների լիարժեք իրացման համար՝ երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ հզորացում	12.1 «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	2023 թ.՝ ապահովվել է նախագծի փաթեթի շուրջ առնվազն չորս քննարկում՝ երեխաներին խնամք տրամադրող կազմակերպությունների, շահագրգիռ մարմինների մասնակցությամբ, առնվազն մեկ անգամ քննարկվել է ՀՀ վարչապետի 2019 թվականի օգոստոսի 26-ի N 1197-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության ազգային	Արդարադատության նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2022-2024 թվականներին	Ֆինանսավորում չի պահանջում

			<p>հանձնաժողովի նիստի շրջանակներում, առաջարկությունների արդյունքում լրամշակված նախագիծն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>2024 թ.՝ ՀՀ օրենքի փաթեթը ընդունված է, որով. 1. Երեխաների այլընտրանքային խնամքի, մասնավորապես, խնամատարության և որդեգրման գործընթացները բարելավված են, 2. Առկա են երեխայի կարծիքի հաշվի առնման հստակ մեխանիզմներ</p>			
		<p>12.2 «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքների փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>2023թ.՝ ապահովվել է նախագծի փաթեթի շուրջ առնվազն չորս քննարկում՝ երեխաներին խնամք տրամադրող կազմակերպությունների, շահագրգիռ մարմինների մասնակցությամբ, առնվազն մեկ անգամ քննարկվել է երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի նիստի շրջանակներում, առաջարկությունների արդյունքում լրամշակված նախագիծն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>2024 թ.՝ «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքների փաթեթն ընդունվել է, որոնք համապատասխանեցված են</p>			

			<p>Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին և ապահովված է երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը, և որով.</p> <p>1. Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա է ոլորտային պատասխանատուների դերերի հստակ բաշխվածություն</p> <p>2. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերման, ուղղորդման և ծառայությունների տրամադրման գործընթացները բարելավված են</p>			
		<p>12.3 «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>1.2023թ.՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթն ընդունվել է, որով՝</p> <p>1) ապահովված են առանց ծնողական խնամքի մնացած և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կրթական իրավունքի իրացման համար նպաստավոր պայմանները,</p> <p>2) բարելավվել են շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և շուրջօրյա խնամքի հաստատությունների շրջանավարտ հանդիսացող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին</p>			

			պատկանող անձանց ինքնուրույն կյանքի անցմանն ուղղված պայմանները				
13	Շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններ ի շենքային պայմանների բարելավում	13.1 Շուրջօրյա խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենքային պայմանների մոնիթորինգ և գնահատում	Շենքային պայմանները նախնական գնահատված են, վերանորոգման առաջնահերթությունները որոշված են	Քաղաքաշինության կոմիտե  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում	
		13.2 Համապատասխան մասնագետների կողմից շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենքային պայմանների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում՝ մրցույթով ընտրված կազմակերպության միջոցով	Նախագծանախահաշվային աշխատանքների արդյունքում հստակեցվել է անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը			2023 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Պահանջվում է ֆինանսավորում արվելիք շինարարական աշխատանքների 5%-ի չափով:
		13.3 Շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենք-	Մրցույթով հաղթած կազմակերպությունների կողմից իրականացված են բարեկարգման աշխատանքներ			2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Պետական բյուջե և Միջազգային կազմակերպություններ

		քային պայմանների բարելավման գործընթացի կազմակերպում				
14	Հանրային կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ապահովում	14.1 «Գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ կառավարման և որոշումների կայացման ոլորտում կանանց հավասար մասնակցության առկայություն, տնտեսության ոլորտում կանանց ձեռներեցությունը խթանող ծրագրերի առկայություն, կրթական և առողջապահական ոլորտներում հավասար մատչելիությունն ապահովող ծրագրերի առկայություն, կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի ամրապնդմանն ուղղված միջոցառումների առկայություն:	Շրջակա միջավայրի նախարարություն  Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Արդարադատության նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Արտաքին գործերի նախարարության  Էկոնոմիկայի նախարարություն  Առողջապահության նախարարություն  Ներքին գործերի նախարարություն  Պաշտպանության նախարարություն  Վիճակագրական կոմիտե)  Երևանի քաղաքապետարան  Մարդու իրավունքների պաշտպան	2024 թվականի մարտի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում

				<p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>		
		<p>14.2 «Կանանց ռեսուրս կենտրոնների» համագործակցային ցանցի հիմնում Հայաստանի Հանրապետության 8 մարզերում:</p>	<p>Հայաստանի Հանրապետության 8 մարզերում «Կանանց ռեսուրս կենտրոնների» համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p> <p>2023թ.՝ Հայաստանի Հանրապետության 2 մարզերում Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p> <p>2024թ.՝ Հայաստանի Հանրապետության 4 մարզերում Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում</p>	<p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2022-2026 թվականներին</p>	<p>Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

			<p>ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p> <p>2025թ.՝ Հայաստանի Հանրապետության 6 մարզերում Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p> <p>2026թ.՝ Հայաստանի Հանրապետության 8 մարզերում Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p>			
15	<p>Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում փոփոխվող իրավիճակին և ստանձնած միջազգային պարտավորությունների ն համահունչ օրենսդրական փոփոխությունների իրականացում,</p>	<p>15.1 «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի յոթերորդ՝ 2023-2026 թթ. Ազգային ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:</p>	<p>Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում համապարփակ միջոցառումների իրականացման և երևույթի առավել արդյունավետ կանխարգելման առկայություն (բարելավված օրենսդրական դաշտի առկայություն, խնդրով զբաղվող միջգերատեսչական ակտիվ համագործակցության առկայություն, խնդրին առնչվող առաջնային օղակի</p>	<p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Արտաքին գործերի նախարարություն</p> <p>Առողջապահության նախարարություն</p> <p>Արդարադատության նախարարություն</p>	<p>2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջում</p>

<p>պետության կողմից տրամադրվող թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների բարելավում, միջգերատեսչական, միաջազգային և հասարակական կառույցների հետ համագործակցության կայուն մեխանիզմների ներդրում:</p>		<p>որակավորված մասնագետների առկայություն, առավել շատ թվով բացահայտված դեպքերի առկայություն, աջակցության և պաշտպանության մեխանիզմների հստակեցում:</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն</p> <p>Ազգային անվտանգության ծառայություն</p> <p>Ոստիկանություն</p> <p>Քննչական կոմիտե (համաձայնությամբ)</p> <p>Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)</p> <p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (համաձայնությամբ)</p> <p>Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ</p> <p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>		
--	--	--	--	--	--



		<p>15.2 Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների ընդլայնում</p>	<p>1.Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների գնահատում</p> <p>2.Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների համատեքստում Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ համագործակցային հարաբերությունների ստեղծում</p> <p>3.Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալական վերաինտեգրմանն ուղղված մեխանիզմների առկայություն</p> <p>4.Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների արդյունքների գնահատում</p>	<p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p> <p>2024 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>2025 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2026 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>	<p>Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
16	<p>Ընտանիքում բռնության երևույթի կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում</p>	<p>16.1 Բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործող ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից տրամադրվող աջակցության տեսակների և մատուցվող ծառայությունների ընդլայնում, մասնավորապես, կանանց տնտեսական զարգացմանն ու հզորացմանն ուղղված աջակցության նոր տեսակների ավելացմամբ</p>	<p>1.Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների կողմից անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն թվով 3 մարզերում:</p>	<p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2023 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

			<p>2.Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների կողմից անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն թվով 6 մարզերում:</p>		<p>2024 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>	
			<p>3.Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների կողմից անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն թվով 9 մարզերում:</p>		<p>2025 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>	
			<p>4.Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների կողմից</p>		<p>2026 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>	

			անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն << բոլոր մարզերում և Երևան քաղաքում:			
		16.2 Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայությունների ընդլայնում	<p>1. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց թվով 1 ապաստարանի ավելացում՝ սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրմամբ:</p> <p>2. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց թվով ևս 1 ապաստարանի ավելացում՝ սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրմամբ:</p> <p>3. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանների քանակի ավելացման և սոցիալական վերաինտեգրմանն ու սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման հիման վրա մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի որակի և արդյունավետության գնահատում:</p>	<p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2024 թվականի մարտի 1-ին տասնօրյակ.</p> <p>2025 թվականի մարտի 1-ին տասնօրյակ</p> <p>2026 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ
17	Առաջիկա տարիներին ծնելիության կայուն աճ ապահովելու, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ հանրապետության բնակչության թվի էական աճ գրանցելու	17.1 << Ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Հաստատված՝ Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի առկայություն, որտեղ կամրագրվեն Ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված՝		2022 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

նախադրյալների ստեղծում		առաջիկա 5 տարիներին ձեռնարկվելիք քայլերը			
	17.2 «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակվում է բոլոր մայրերին՝ անկախ նրանց հաշվառման (բնակության) վայրի: Արդյունքում շահառուների թիվը կավելանա ի հաշիվ շուրջ 10000 չափատող, քաղաքաբնակ մայրերի՝ 2023թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված երեխաների խնամքի կապակցությամբ		2022 թվականի հունիսի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, ծախսերը 2023 թ. կավելանան շուրջ 1.2 մլրդ դրամով (խնամքի նպաստի չափը՝ 30,700 դրամ)
	17.3 «Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն նշանակելու և վճարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Սահմանվել է դրամական աջակցության նոր տեսակ 2022 թ. հունվարի 1-ից հետո ծնված երեխաների հաշվառմամբ ընտանիքներին մինչև 6 տարեկան 3-րդ և հաջորդ երեխաների համար ամսական կտրամադրվի 50,000 դրամ ֆինանսական աջակցություն		2021 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակը	ՀՀ պետական բյուջե, ծախսերը 2023-2026թ. յուրաքանչյուր տարի նախորդ տարվա նկատմամբ կավելանան 5.4 մլրդ դրամով
17.4 «Գյուղաբնակ երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին աջակցելու պետական աջակցության 2023-2026 թվականների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Սահմանված են պետական աջակցության 2023-2026 թվականների ծրագրեր, որոնք ուղղված են գյուղաբնակ երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին սոցիալ-տնտեսական աջակցություն տրամադրելուն	Էկոնոմիկայի նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Պետական եկամուտների կոմիտե	2022 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, ծախսերը կգնահատվեն հետագայում՝ ծրագրերից ելնելով	

18	Կենսաթոշակառուների և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, ինչպես նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման գործընթացների լավարկում, առցանց մատուցվող ծառայությունների սպեկտրի ընդլայնում	18.1 «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Ապահովվել է առցանց դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելը և աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկելը		2021 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		18.2 «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Ապահովվել է առցանց դիմումի հիման վրա աշխատող կենսաթոշակառուի (նպաստառուի) կենսաթոշակ (նպաստ) վճարելու եղանակը		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		18.3 ՀՀ պետական բյուջե վերականգնված՝ սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառման ենթահամակարգի գործարկում	Ավտոմատացվել է որոշումների կայացման գործընթացը:	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2025 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
		18.4 «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներին հավանություն տալու մասին»	Ապահովվել է էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա Միասնական սոցիալական ծառայության կողմից մայրության նպաստի նշանակումը և վճարումը:	Առողջապահության նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Պետական եկամուտների կոմիտե	2024 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե  Լրացուցիչ ծախսերի պահանջը հնարավոր կլինի գնահատել գործընթացի իրականացման փուլում

		ՀՀ կառավարության որոշումն ընդունված է				
19	Պարբերաբար վերանայվելու (բարձրացվելու) են պետական կենսաթոշակների և նպաստների չափերը	19.1 «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն, 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն և 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	1. Նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը 2026 թ. հավասարեցվել են, համապատասխանաբար, պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին՝ 37 000 դրամ և 68000 դրամ, 2. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, խնամքի նպաստի չափերը 2026 թ. հավասարեցվել են պարենային զամբյուղի արժեքին՝ 37000 դրամ		2021-2026 թվականներին յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
			1. Նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը նախորդ տարվա նկատմամբ բարձրացվել են՝ 2026 թ., համապատասխանաբար, պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին հավասարեցվելն ապահովելու համար, 2. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, խնամքի նպաստի չափերը նախորդ տարվա նկատմամբ բարձրացվել են՝ 2026 թ., պարենային զամբյուղի արժեքին հավասարեցվելն ապահովելու համար		2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ 2023թ. պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում
					2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ 2024թ. պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում
					2025 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ 2025թ. պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում
					2026 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ 2026թ. պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում

			2. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, խնամքի նպաստի չափերը հավասարեցվել են պարենային զամբյուղի արժեքին			
20	Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների զինձառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության (կենսաթոշակային ապահովության) բարձրացում, զինձառայողների սոցիալական ապահովման երաշխիքների մեծացում	20.1 «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	«Ձինձավորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքներով զինձառայողների վարձատրության համակարգում կատարված փոփոխություններին համապատասխան (նշված օրենքներում փոփոխություններ կատարված լինելու դեպքում) զինձավորական կենսաթոշակի վերանայված հաշվարկման կարգ	Պաշտպանության նախարարություն  Ոստիկանություն  Ազգային անվտանգության ծառայություն  Արտակարգ իրավիճակների նախարարություն  Արդարադատության նախարարություն	2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե  Հաշվարկները կարող են ներկայացվել նշված օրենքներում փոփոխությունների ընդունումից հետո՝ պայմանավորված զինձառայողների վարձատրության համակարգի փոփոխությամբ
21	Նախկինում վերցված ու չմարված գյուղատնտեսական վարկերի պատճառով վատ վարկային պատմություն ունեցող անձանց վարկային պատմությունների բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	21.1 «Նախկինում վերցված ու չմարված գյուղատնտեսական վարկերի պատճառով վատ վարկային պատմություն ունեցող անձանց վարկային պատմությունների բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	«Նախկինում վերցված ու չմարված գյուղատնտեսական վարկերի պատճառով վատ վարկային պատմություն ունեցող անձանց վարկային պատմությունների բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացված է Վարչապետի աշխատակազմ	Կենտրոնական բանկ  Ֆինանսների նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն	Կառավարության ծրագրից բխող հնգամյա միջոցառումների ծրագրի ընդունումից հետո՝ 3-ամսյա ժամկետում	Ֆինանսավորում և չի պահանջվում
22	Սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության առաջնահերթությունները սահմանելու	22.1 Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և	1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համապատասխան հրամանով հաստատվել է ծրագրերի ՄԳ-ի կարգը և մեթոդաբանությունը:		1.2022 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում

	<p>նպատակով առկա խնդիրների բացահայտումը, իրականացվող ծրագրերի արդյունավետության և հասցեականության բարձրացումը, շահառուների և այլ շահագրգիռ կողմերի ծրագրերից բավարարվածության աստիճանի գնահատումը, ՀՀ պետական բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը</p>	<p>գնահատման համակարգի ներդրում (ՄԳ)</p>	<p>2. ՀՀ պետական բյուջե ներառված մեկ ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p> <p>3. ՀՀ պետական բյուջե ներառված մինչև չորս ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p> <p>4. ՀՀ պետական բյուջե ներառված մինչև չորս ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p> <p>5. ՀՀ պետական բյուջե ներառված մինչև չորս ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p> <p>6. ՀՀ պետական բյուջե ներառված մինչև չորս ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p>		<p>2.2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p> <p>3. 2023 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p> <p>4. 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p> <p>5. 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p> <p>6. 2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	
23	<p>Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգով նախատեսված՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորմանը, միգրացիոն հոսքերի</p>	<p>23.1 «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2025-2035 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2025-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ</p>	<p>«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2025-2035 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2025-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման</p>		2024-2025 թթ.	Դրամաշնորհային միջոցներ



	կառավարմանը, հարկադիր միգրանտների զանգվածային ներհուքի ճգնաժամային կառավարմանը, հայրենադարձության խթանմանն ուղղված գործողությունների կատարման ապահովում	կառավարության որոշման վերջնական լրամշակված նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:			
1	Տնտեսական աճի ապահովում՝ 7-9%	<p>1.1 Տնտեսական զարգացման քաղաքականության մշակում և իրականացում «Տնտեսական զարգացման քաղաքականությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում</p> <p>1.2 Հանրային ներդրումների կառավարման բարելավում</p>	<p>Տնտեսական զարգացման քաղաքականությունը մշակված է և ներկայացված է հաստատման</p> <p>2023-2026 ակնկալվող արդյունքները՝ «Տնտեսական զարգացման քաղաքականությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատումից հետո ըստ վերոնշյալ որոշմամբ հաստատված Ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրում ներառվելիք արդյունքային ցուցանիշների (բաշխվածքն համապատասխան տարիների)</p> <p>Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծում (հանրային ներդրումային ծրագրերի ինտեգրված թվային համակարգի ձևավորում):</p> <p>Կառավարության կապիտալ ներդրումների ամբողջական իրականացմանը նպաստում</p> <p>Ծրագրային ապահովման ձեռքբերման աշխատանքների իրականացում</p>	<p>Համապատասխան ոլորտը համակարգող ՀՀ փոխվարչապետի գրասենյակ</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>«ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)</p>	<p>2022-2026 թ., յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ, ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>Իրավական ակտի հաստատում՝ 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p> <p>2022-2026թթ. Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ին տասնօրյակ Ավարտը 2026թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծում 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p> <p>Դրամաշնորհներ Դոնոր կազմակերպություններ Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>

		<p>1.3 Աշխատանքի շուկայում տնտեսության պահանջարկի վերհանում</p>	<p>Կրթական համակարգի պատվերի մեթոդաբանության մշակում, տնտեսական քաղաքականության համապատասխան հեռանկարային և պահանջված մասնագիտությունների վերհանում՝ առանձնացնելով պահանջվող մասնագիտությունների համար կրթության մակարդակները</p>	<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p>	<p>2022-2023թթ. ավարտը 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
		<p>1.4 Պետություն-մասնավոր գործընկերության զարգացում, «Պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը հաստատելու, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանումը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատում</p>	<p>Պետություն-մասնավոր գործընկերության օրենսդրական դաշտի ամբողջականացում</p> <p>Տարեկան առնվազն 3 ՊՄԳ գործարքի մեկնարկ</p> <p>ՊՄԳ ծրագրերի մոնիթորինգի և հաշվետվողականության համակարգը ներդրված է</p> <p>ՊՄԳ ծրագրերի կառավարման ինստիտուցիոնալ համակարգը լիարժեք ներդրված է և համապատասխան ֆունկցիոնալ ստորաբաժանումը լիարժեք համալրված է</p>		<p>2022-2026թթ. ՊՄԳ ընթացակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ 2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ին տասնօրյակ ավարտը 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>

		<p>1.5 Երևան-Թբիլիսի արագընթաց գնացքի ներդրումային ծրագրի հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում</p>	<p>Երևան-Թբիլիսի արագընթաց գնացքի առկայություն</p> <p>Երևան-Թբիլիսի արագընթաց գնացքի առկայության ճանապարհային քարտեզի հաստատում</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p>	<p>Հայեցակարգի հաստատումը 2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ</p> <p>Ճանապարհային քարտեզի հաստատում՝ 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի, դրամաշնորհներ և վարկային միջոցներ</p>
		<p>1.6 Պղնձածուլական կլաստերների ձևավորման հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում</p>	<p>Պղնձի արտադրության մետալուրգիական ձեռնարկության շահագործումը լոկոմոտիվային դեր կխաղա հանրապետության տնտեսության զարգացման համար և կխթանի հանրապետության այլ ճյուղերի զարգացումը՝ գեներացնելով հարկեր, ստեղծելով նոր աշխատատեղեր, նպաստելով աղքատության կրճատմանը</p> <p>Պղնձի վերամշակման խորացումը, ընդհուպ՝ մինչև էլեկտրատեխնիկական պղնձի, իսկ հետագայում նաև լարերի արտադրության կազմակերպումը կխթանի հանրապետության էլեկտրատեխնիկական համալիրի զարգացմանը</p> <p>Միջոցառման իրականացման ճանապարհային քարտեզի հաստատում</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p>	<p>Հայեցակարգի հաստատումը 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ ճանապարհային քարտեզի հաստատում՝ 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>Իրականացումը՝ 2022-2026թթ.</p>	
		<p>1.7 Խոշոր ներդրումային ծրագրերի հայեցակարգի հաստատում վարչապետի աշխատակազմ, հաստատման դեպքում ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում</p>	<p>1. Ակադեմիական քաղաք Նպատակ է հետապնդում կառուցել համալսարանական քաղաք-համայնք (Երևանից դուրս)՝ համալրված համալսարանական բնակչությամբ, որտեղ տեղափոխվելու են հիմնական</p>	<p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և</p>	<p>Հայեցակարգի հաստատման ժամկետ՝ 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>1-5-րդ արդյունք՝ ըստ ներդրումային ծրագրի Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից</p>



			<p>քղեցները և համալսարանները: Այն դառնալու է կրթական հաբ, որն իր մեջ ներառելու է տարբեր ակադեմիական ոլորտներ և ծրագրեր</p> <p>2. Ծաղկունք նախագիծ      ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան, Դմաշեն, Զովաբեր, Ծաղկունք, Վարսեր համայնքները և Սևան համայնքի Գագարին բնակավայրը ներառող տարածքի կայուն զարգացման մոդելային ծրագրի իրականացում՝ պետական-մասնավոր գործընկերության վրա</p> <p>3. Լճաշենից Սևանի թերակղզի ձգվող առափնյա ճեմուղու կառուցում      Կառուցել ճեմուղի Սևանի արդեն իսկ կարգավորված հատվածներում, որը գործելու է տարվա բոլոր եղանակներին</p> <p>4. ՀԱՅՓՐՈՍՓԵՔԹ      Նպատակն է Հայաստանում կառուցել նորարար, կանաչ, կայուն և ներառական համայնք, որն իր մեջ ներառելու է համայնքային ծառայություններ, գյուղատնտեսական կենտրոն, նորարարական կենտրոն, ազատ արդյունաբերական գոտի, լոգիստիկա և պահեստներ, կրթական, առողջապահական և բնակելի գոտիներ, զբոսաշրջային կենտրոն, տարեցների խնամքի կենտրոն</p> <p>5. Երևան բիզնես պարկ</p>	<p>ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Քաղաքաշինության կոմիտե</p> <p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	<p>Ճանապարհային քարտեզի հաստատում 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>հաստատված ծրագրի</p>
--	--	--	---	--	--	-------------------------

			<p>(Դաուն թաուն Երևան) Կոմերցիոն զարգացման կենտրոն կամ ֆինանսական հար</p> <p>6. Covid-19 համավարակի դեմ նախատեսված պատվաստանյութերի և ՊՇՌ- թեստերի արտադրություն Հայաստանում</p>			
		1.8 Ամուսարի ոսկու հանքի շահագործման ծրագրի իրագործմանն ուղղված աշխատանքների համակարգում	<p>Ամուսարի հանքի շահագործում և պետության կողմից ծրագրի ուղղությամբ հետևողական համակարգման իրականացում՝ պետական բյուջեի մուտքերի ապահովում և բնապահպանական նորմերի ապահովում</p> <p>Ամուսարի հանքի շահագործման ծրագրի հաստատում</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>Տեխնիկա- տնտեսական փաստաթղթերի ներկայացման ժամկետ՝ 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>Աշխատանքների համակարգումը 2022-2026թթ.</p>	Ֆինանսավորում ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
2	<p>Արտադրողականության աճ և գործազրկության կրճատում</p> <p>Արտադրողականություն 12% ՀՆԱ/մարդxժամ; գործազրկություն՝ &lt;10%</p>	2.1 Ռազմավարական և առաջնահերթ ոլորտներում տեխնոլոգիական արդիականացում և բիզնես պրոցեսների օպտիմալացում	<p>Առաջնահերթ ոլորտներում մասնավոր հատվածի ընկերությունների տեխնոլոգիական արդիականացման նպատակով պետական աջակցության գործիքակազմի և ֆինանսական փաթեթի հասանելիություն</p> <p>Սարքավորումների ձեռք բերման (ներկրման) համար լիզինգի սուբսիդավորում՝ առաջնահերթ և աճի պոտենցիալ ունեցող ոլորտներում: Տարեկան առնվազն 600 բիզնես սուբյեկտի աջակցություն</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p>	2022-2026թթ. ավարտը 2026 թ. դեկտեմբերի 2- րդ տասնօրյակ	Ֆինանսավորում ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի

			Տարեկան առնվազն 400 բիզնես սուբյեկտներին բիզնես գործընթացների օպտիմալացման համար անհրաժեշտ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար ֆինանսական օժանդակություն			
		2.2 Աշխատաշուկայում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում տեղական ընկերություններում	Արտաքին աշխատաշուկաներից տարեկան առնվազն 200 պահանջված, բարձր որակավորում ունեցող մասնագետները ներգրավված են տեղական ընկերություններում		2022-2026 թթ. ավարտը 2026 թ. դեկտեմբեր, 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
		2.3 Տնտեսության մեջ թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգի հաստատում	<p>1. Տնտեսության թվայնացման հայեցակարգի ընդունում</p> <p>2. Տնտեսության թվայնացման հայեցակարգից բխող ծրագրերի հաստատում</p> <p>3, Տարեկան 400 բիզնես սուբյեկտի ֆինանսական աջակցություն, ով անցում կկատարի էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրմանը բիզնես գործընթացներում</p> <p>4. ընկերությունների կողմից գիտահետազոտական աշխատանքների իրականացման ծավալի աճ</p>	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Հայեցակարգի հաստատման ժամկետը՝ 2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ  Միջոցառման ամբողջական իրականացումը 2022-2026թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
3	Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում  Ներդրումներ/ՀՆԱ՝ 25%, ՕՌԻՆ/ՀՆԱ՝ 6%	3.1 Ներդրումային քաղաքականության մշակում և իրագործում, Ներդրումային քաղաքականությունը հաստատելու մասին իրավական ակտի մշակում	Գլոբալ ներդրումային արժեշտի թանկերի և հոսքերի վերլուծության հիման վրա Հայաստանի միջազգային ներդրումային քարտեզի վրա դիրքավորելու պոտենցիալը և ռազմավարական	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)  «Հայաստանի պետական հետաքրքրությունների	Հայեցակարգի հաստատումը 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի

		<p>առաջնահերթությունները սահմանված են</p> <p>Ընտրված ոլորտներում և/կամ ուղղություններով ներդրումների ներգրավման խոչընդոտները բացահայտված են</p> <p>Նույնականացված են միջազգային ներդրումային արժեշտներում Հայաստանի բարենպաստ դիրքավորման մրցակցային կետերը և դրանք հզորացնելու լուծումներն ու գործիքները:</p> <p>Նախանշված են ներդրումային քաղաքականության իրավական և ինստիտուցիոնալ բացերը և լուծումները</p>	<p>Ֆոնդ» ՓԲԸ (համաձայնությամբ)</p>		<p>դրամաշնորհներ և վարկային միջոցներ</p>
	<p>3.2 Ընկերություններում արդիական կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման խթանում</p>	<p>Կորպորատիվ կառավարման կանոնագրքի և ուղեցույցների վերանայում</p> <p>1, Օրենսդրական փոփոխությունների իրականացում, որի արդյունքում նախատեսվում է Կորպորատիվ կառավարման ուղեցույցը մի շարք կազմակերպությունների դարձնել պարտադիր կիրառելի</p>	<p>«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (համաձայնությամբ)</p>	<p>2022-2026 թթ. Յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
	<p>3.3 Գործարար միջավայրի բարելավման ծրագրի մշակում և իրականացում, «Գործարար միջավայրի բարելավման ծրագիրը</p>	<p>Հաստատված ծրագրի շրջանակում մինչև 50 իրավական ակտի ( տարեկան մինչև 10 իրավական ակտ) պատրաստում և իրագործում</p>		<p>2022-2026 թթ., յուրաքանչյուր տարի դեկտեմբերի</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից</p>

	<p>հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում</p>	<p>Գործարար միջավայրի բարելավում և վարչարարության կրճատում</p>		<p>3-րդ տասնօրյակ, ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>«Գործարար միջավայրի բարելավման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատումը 2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>հաստատված ծրագրի</p>
	<p>3.4 «Տնտեսական բարդ ներդրումային ծրագրերի չափորոշիչները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում և դրա շրջանակներում ներդրումային խորհրդի ստեղծում</p>	<p>Տնտեսական բարդության աստիճանով պայմանավորված ծրագրերի գնահատման և ընտրության չափորոշիչներն ու մեխանիզմները սահմանված են</p> <p>Չափորոշիչների համաձայն տնտեսական բարդությամբ պայմանավորված ներդրումային ծրագրերին պետական աջակցության գործիքակազմը մշակված է</p>	<p>Պետական եկամուտների կոմիտե</p> <p>«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)</p>	<p>2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
	<p>3.5 Համագործակցություն միջազգային կարևոր ցուցիչներ և ռեյտինգներ հրապարակող ընկերությունների հետ</p>	<p>Ճանապարհային քարտեզի գործարկում, օպերատիվ և պարբերական վերլուծությունների տրամադրում, ցուցիչների և ցուցանիշների բարելավում</p> <p>Երկրի ներդրումային իմիջի և մրցունակության բարձրացմանն ուղղված քաղաքականությունների</p>	<p>Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2022-2023 թթ. Ավարտը 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>20242026 թ.,</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>

		<p>մշակման և վերանայման համար վերլուծական հիմքերի ապահովում</p> <p>Տարվա ընթացքում «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» 4 (չորս) եռամսյակային զեկույցների մշակում և ներկայացում միջազգային վարկանիշային FITCH, MOODY'S և STANDARD &amp; POOR'S (S&amp;P) կազմակերպություններին</p>		<p>յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ, ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	
	<p>3.6 Պետական ֆինանսական ենթակառուցվածքների միավորում /DICA, FREDA և այլ/</p>	<p>Պետական ֆինանսական միջոցների տնտեսում, կառույցների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում և տնտեսավարողների համար առկա գործիքակազմերի հասանելիության բարձրացում և ընթացակարգերի ժամկետների կրճատում</p>		<p>2022 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
	<p>3.7 «Գույք ներդրումների դիմաց» օժանդակության տրամադրման միջոցառման իրականացման անհրաժեշտ բազային պահանջները, օժանդակության տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում և իրագործում</p>	<p>Պետության կողմից գնահատվելու է համապատասխան գույքը և ներդրողի կողմից ներդրում իրականացնելու դեպքում գույքը սեփականության իրավունքով տրամադրվելու է ներդրողին: Պետական գույքի տրամադրման պարագայում ներդրումների ներգրավում</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Պետական գույքի կառավարման կոմիտե</p>	<p>Ծրագրի հաստատումը 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
	<p>3.8 Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց ծրագրի հաստատում և հաստատման դեպքում՝ իրականացում</p>	<p>Պետության կողմից իրականացվելու է համապատասխան տարածքում ենթակառուցվածքների կառուցում: Ներդրումների ներգրավում, խրախուսելով և օժանդակելով ներդրողներին,</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն «Հայաստանի տարածքային զարգացման</p>	<p>Ծրագրի հաստատումը՝ 2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>

			մասնավորապես ապահովելով անհրաժեշտ ենթակառուցվածքով:	հիմնադրամ» (համաձայնությամբ)  Քաղաքաշինության կոմիտե		
		3.9 Մտավոր սեփականության ոլորտի զարգացում, «Ապրանքային նշանների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունում և «Մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	1. Ապրանքային նշանների իրավական պահպանություն տրամադրելու ընթացակարգերի հստակեցում և արդյունավետության բարձրացում  2. Ստեղծագործական և ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծում, մտավոր սեփականության իրավունքի արդյունավետ և հուսալի պահպանության և պաշտպանության ապահովում	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Պետական եկամուտների կոմիտե  Ոստիկանություն	1. Օրենքի նախագծի հաստատումը՝ 2022թ. մայիսի 1-ին տասնօրյակ  2. 2022թ դեկտեմբեր, 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
4	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում,  ՓՄՁ-ի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 55%	4.1 Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգի հաստատում, հաստատումից հետո ծրագրերի մշակում և իրագործում	1. Ամեն մարզում 1 ՆՁԱԿ կենտրոնի վերազինում: Կենտրոնում կլինեն բիզնես խորհրդատվական ծառայություններ, կլինեն տեխնոլոգիաների տրանսֆերի գրասենյակներ, կանցկացվեն բիզնես ինկուբացիոն ծրագրեր, վերապատրաստումներ, կլինեն նորաստեղծ կամ փոքր ընկերությունների համար հարմարավետ գրասենյակային վարձակալման պայմաններ: Կենտրոնի մասնաճյուղերը կնպաստեն մարզերում ոչ գյուղատնտեսական նոր աշխատատեղերի ստեղծմանը  2. Ամեն ՆՁԱԿ կենտրոնի վերազինումից հետո տարեկան՝ - 500 ձեռներեց (կանանց և	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայեցակարգի հաստատումը 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ  2022 - 2026 թթ. ավարտը՝ 2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ  Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի դրամաշնորհներ և վարկային միջոցներ

		<p>մարզային բնակչության շեշտադրմամբ) կդառնա ՓՄՁ ինկուբացիոն ծրագրի շահառու,</p> <ul style="list-style-type: none"> <li>- 500 ՓՄՁ սուբյեկտի աջակցություն, որից առնվազն 20 գիտատար պրոդուկտ զարգացնող ՓՄՁ-ի աջակցություն,</li> <li>- 150 վերապատրաստում,</li> <li>- 10 նոր ռեզիդենտ ընկերության գրանցում,</li> <li>- 10 գյուտի առևտրայնացում կամ տեղայնացում</li> </ul>			
	4.2 Մասնավոր հատվածի մասնագիտական կարողությունների զարգացում	<p>1. Ունենալ ազգային EdTech պլատֆորմ, որի շահառուն կհանդիսանա այդ թվում նաև մասնավոր ոլորտը: Կատարել տարեկան 10.000 վերապատրաստում՝ լայն մարզային բաշխվածությամբ</p> <p>2. Ունենալ բիզնես գաղափարների և գործունեության աջակցության/խորհրդատվական և վերապատրաստման կենտրոններ: Կատարել տարեկան 500 բիզնեսի խորհրդատվություն:</p> <p>3. «Հաջողված մասնավոր/ոչ ֆորմալ կրթական հաստատությունների հետ համատեղ առկա ուսումնական հաստատության վերակազմակերպում կամ տարեկան 1 նոր կրթական հաստատության ստեղծում, արհեստագործական, միջին</p>	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2022 – 2026 թթ. ավարտը՝ 2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի  դրամաշնորհներ և վարկային միջոցներ



		մասնագիտական և այլ՝ բիզնեսի կողմից պահանջված մասնագետների բացը լրացնելու համար: Տարեկան առնվազն 150 նոր մասնագետի աշխատանքով ապահովում»:			
	4.3 Պետություն-մասնավոր երկխոսության պետական ծրագրի հաստատում և իրագործում	<p>1. Հաստատել ՊՄԵ նոր աշխատակարգ</p> <p>2. Բոլոր գերակա ոլորտներում ունենալ ՊՄԵ խորհուրդ</p> <p>3. Կազմակերպել տարեկան առնվազն 1 բարձր մակարդակի պետություն մասնավոր երկխոսության աշխատաժողով</p>		Ծրագրի հաստատման ժամկետը՝ 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Դրամաշնորհներ այլ աղբյուրներ
	4.4 Ֆինանսների հասանելիության ապահովում, «ՓՄՁ ներդրումային ֆոնդի և զարգացման բանկի հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում իրագործում	1. ՓՄՁ ներդրումային ֆոնդի և զարգացման բանկի ստեղծում, որի արդյունքում տարեկան 3000 ՓՄՁ կստանա աջակցություն		Հայեցակարգի հաստատումը՝ 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ 2022թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Դրամաշնորհներ այլ աղբյուրներ
2. Սկսնակ և գործող ՓՄՁ աջակցության ծրագրերի շրջանակում տարեկան 2000 ՓՄՁ-ի ֆինանսական աջակցության տրամադրում, թիրախավորելով կանանց և առաջնահերթություն տալով աճի ամենամեծ պոտենցիալը ունեցող ոլորտներին		2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ			
3. Կապիտալի շուկայում 3 նոր ներդրումային ֆոնդերի ներգրավում, անհրաժեշտ բարեփոխումների ուղեկցմամբ		2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ			

			4. Սփյուռքի ներդրումային մանրաձախ ռեսուրսի մոբիլիզացիա		2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
5	Արտահանման խթանում  Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ՝ 60%	5.1 «ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում»	Հայրենական արտադրողների և արտադրանքի մրցունակության ապահովում, արտահանման ծավալների ավելացում, թիրախային շուկաներում վերհանված խոչընդոտների վերացում		Ռազմավարության հաստատման ժամկետ՝ 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
		5.2 Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2021-2026 թթ. միջոցառումների իրականացում,  «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2022թ. միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի հաստատում	Արտահանմանն ուղղված պետական աջակցության տրամադրում, մասնավորապես ցուցահանդեսների կազմակերպման, տեղական արտադրանքի առաջնության և ճանաչելիության բարձրացում, պոտենցիալ գնորդների և դիստրիբյուտորների ներգրավում Այդ թվում. 2023 թ.-ի ընթացքում օտարերկրյա պետություններում և (կամ) Հայաստանում 6 ցուցահանդեսների և 7 գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում	Արտաքին գործերի նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի հաստատումը՝ 2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ  2022-2026 թթ., յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին տասնօրյակ,  ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի  դրամաշնորհներ և վարկային միջոցներ
		5.3 ՀՀ տարածքից արտահանման/ներմուծման նպատակով բեռների՝ լաստանավով, օդանավով և այլ տրանսպորտային միջոցներով տեղափոխման ծախսերի փոխհատուցման ծրագրերի մշակում և իրականացում	Սեզոնային բարձր գների ժամանակահատվածում բեռների տեղափոխմանն առնչվող լոգիստիկ խոչընդոտների նվազեցում, կոմունիկացիոն ապաբլոկավորում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Լաստանավով տեղափոխման ծախսերի փոխհատուցման ծրագրի հաստատման ժամկետ 2021թ. դեկտեմբերի 3-ին տասնօրյակ Օդանավով և այլ տեղափոխման ծախսերի փոխհատուցման	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի  Դրամաշնորհներ և վարկային միջոցներ

				Ծրագրի հաստատման ժամկետ 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
	5.4 Մաքսասակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտի վերաբերյալ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացում	<p>2023 թվականի համար առնվազն 2 ապրանքի՝ երրորդ երկրներից ներմուծման մաքսատուրքի նվազեցման մասով ՀՀ նախաձեռնողական առաջարկի ներկայացում Եվրասիական տնտեսական հանձնաժողով, ինչ թույլ կտա հայրենական արտադրողների համար ապահովել առավել նպաստավոր պայմաններ: Միաժամանակ, յուրաքանչյուր հաջորդ տարիների համար նշյալ միջոցի կիրառմանը ենթակա ապրանքների քանակը կորոշվի տնտեսության կառուցվածքային փոփոխություններին և առաջնահերթություններին համընթաց:</p> <p>Մի շարք ապրանքատեսակների մասով հայրենական արտադրողների համար առավել նպաստավոր պայմանների ապահովում</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Պետական եկամուտների կոմիտե</p> <p>Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ)</p>	2021-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
	5.5 Ներքին շուկայի պաշտպանության և հակագնազցման միջոցների կիրառման քաղաքականության մշակում	2023 թվականի համար ԵԱՏՄ հարթակում քննարկելու նպատակով՝ առնվազն 2 ապրանքատեսակի մասով ներքին շուկայի պաշտպանական կամ հակագնազցման միջոցների կիրառման առաջարկի ներկայացում, ինչն ուղղված է տեղական արտադրողների համար հավասար մրցակցային պայմանների ապահովմանը:	Պետական եկամուտների կոմիտե	2022-2026թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի

			<p>Միաժամանակ, յուրաքանչյուր հաջորդ տարիների համար նշյալ միջոցի կիրառմանը ենթակա ապրանքների քանակը կորոշվի տնտեսության կառուցվածքային փոփոխություններին և առաջնահերթություններին համընթաց:</p> <p>Հայրենական արտադրողների համար հավասար մրցակցային պայմանների ապահովում</p>			
6	Միջազգային առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում և խորացում	6.1 ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացում, ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ապահովում	<p>ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ «Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասում ամրագրված դրույթների և պայմանավորվածությունների արդյունավետ իրականացում, ՀՀ – ԵՄ Առևտրի գործընկերության կոմիտեի և համապատասխան ենթակոմիտեների նիստերի անցկացում, ոլորտային 12 ճանապարհային քարտեզների պարբերական վերանայում</p> <p>2023թ. նախատեսվում է ՀՀ-ԵՄ Առևտրի գործընկերության կոմիտեի և համապատասխան ենթակոմիտեների մեկական նիստերի անցկացում, ՀԸԳՀ «Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասի ներքո 12 ճանապարհային քարտեզների տարեկան վերանայում և տրամադրում եվրոպական կողմին, ինչպես նաև 2022թ. նիստերի ընթացքում ամրագրված երկկողմ պայմանավորվածությունների իրականացում:</p> <p>2024թ. նախատեսվում է ՀՀ-ԵՄ Առևտրի գործընկերության</p>		2021-2026թթ. ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի

			<p>կոմիտեի և համապատասխան ենթակոմիտեների մեկական նիստերի անցկացում, ՀՀ «Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասի ներքո 12 ճանապարհային քարտեզների տարեկան վերանայում և տրամադրում եվրոպական կողմին, ինչպես նաև 2023թ. նիստերի ընթացքում ամրագրված երկկողմ պայմանավորվածությունների իրականացում:</p>			
		<p>6.2 ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում երկկողմ և բազմակողմ ձևաչափով համագործակցության ապահովում, ԵՄ ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացում</p>	<p>1. ԵՄ Արևելյան գործընկերության տնտեսական պլատֆորմի և դրա ներքո գործող պանելների շրջանակներում աշխատանքներին և ծրագրերին մասնակցություն՝ հայկական կողմի դիրքորոշումների ներկայացում և պաշտպանություն</p> <p>2. ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում ֆինանսական գործիքների միջոցով Հայաստանին տրամադրվելիք ֆինանսավորմամբ (2,6 մլրդ եվրո) իրականացվող ծրագրերի շրջանակներում համագործակցության ապահովում, «Աջակցություն կայուն, նորարար և մրցակցային տնտեսությանը. ուղղակի աջակցություն 30000 ՓՄՁ-ների» ուղենիշի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկվող ոլորտային ծրագրերի ձևավորում և իրականացում</p>		<p>2021-2026թթ. ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>2021-2026թթ. ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p> <p>դրամաշնորհներ և վարկային միջոցներ</p>

			<p>2023թ. նախատեսվում է ՀՀ կառավարության հետ համատեղ ՀՀ կենտրոնական բանկի «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի միջոցով բանկային իրացվելիության բարձրացման ծրագրի մեկնարկ:</p> <p>2023թ. նախատեսվում է ԵՄ Արևելյան գործընկերության տնտեսական պլատֆորմի և պանելների նիստերին հայկական կողմի մասնակցություն և դիրքորոշումների ներկայացում:</p> <p>2024թ. ուղենիշ 1.2 ներքո նախատեսվում է վարկային երաշխավորությունների ծրագրի շրջանակներում լրամշակել վարկային երաշխավորությունների տրամադրման մեխանիզմի կոնցեպտ և ձևավորել ծրագրի համապատասխան նախագիծ:</p> <p>2024թ. ուղենիշ 1.2-ի ներքո նախատեսվում է ՓՄՁ մրցունակության բարձրացման ծրագրի շրջանակներում մշակել մրցունակության կենտրոնի նախագծի մոտեցում ու շրջանակ, որը նախատեսվում է իրականացնել ԵՄ ֆինանսավորմամբ:</p> <p>2024թ. ուղենիշ 1.3 ներքո նախատեսվում է որակի ենթակառուցվածքների ոլորտում հստակեցնել ԵՄ ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությունները:</p>			
--	--	--	--	--	--	--

		<p>6.3 ԱՀԿ հետ համագործակցության խորացում և ընդլայնում, ԱՀԿ անդամակցության շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարում</p>	<p>1. ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված ԱՀԿ-ում ՀՀ մաքսատուրքերի դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության փոխհատուցումային բանակցությունների իրականացում, պարտավորությունների նոր ժամանակացանկի ձևավորում մասնավորապես՝ յուրաքանչյուր տարի ԵԱՏՄ շրջանակներում գործող բանակցային խմբի առնվազն 2 նիստերի, բանակցային նոր փաթեթների և առաջարկների առնվազն 2 քննարկումների կազմակերպում և անցկացում</p> <p>2. ՀՀ ոլորտային առևտրային քաղաքականություններին և կիրառվող միջոցներին առնչվող՝ ԱՀԿ համաձայնագրերով սահմանված՝ յուրաքանչյուր տարի մոտ 20 ծանուցումների պատրաստում և ներկայացում ԱՀԿ քարտուղարություն, առևտրային քաղաքականության թափանցիկության և կանխատեսելիության ապահովում:</p>	<p>Պետական եկամուտների կոմիտե</p>	<p>1. 2021-2026թթ. ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>2021-2026թթ. ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p> <p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված հայտերի</p>
--	--	---	---	-----------------------------------	---	--

			<p>3. ԱՀԿ շրջանակներում ընթացող գործընթացներին, երկկողմ և բազմակողմ ոլորտային բանակցություններին նախապատրաստում, մասնակցություն և ՀՀ դիրքորոշումների ներկայացում Մասնավորապես՝ յուրաքանչյուր տարվա ընթացքում դիրքորոշումների ներկայացում ԱՀԿ քարտուղարությունում գործող 3 հանձնաժողովներում մշակված փաստաթղթերի նախագծերի առնչությամբ, ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող մոտ 20 փաստաթղթերի նախագծերի փորձաքննություն՝ ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին համապատասխանեցման ապահովման նպատակով, ինչպես նաև մասնակցություն ԵՏՀ կողմից ստեղծված՝ ԱՀԿ հարցերով աշխատանքային խմբի առնվազն 2 նիստերի աշխատանքներին:</p>		<p>2021-2026թթ. ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	
	<p>6.4 Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականության մշակում և իրականացում, քվոտաների համակարգի ներդրում</p>	<p>Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի որոշումներից բխող, ինչպես նաև կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի շրջանակներում, ԵԱՏՄ անդամ պետություններին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանը առանձին ապրանքների ներմուծման մասով տրամադրվելիք սակագնային քվոտայի կիրառման ապահովում: Վերոնշյալ</p>	<p>Պետական եկամուտների կոմիտե</p> <p>Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ)</p>	<p>2022-2026 թթ. ավարտը 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>	



			<p>միջոցառման շրջանակներում՝ յուրաքանչյուր տարի նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել քվոտաների բաշխման ընթացակարգերը սահմանող առնվազն 4 իրավական ակտ:</p> <p>1. Հայրենական արտադրողների շահերի պաշտպանություն, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացում</p> <p>2. Կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում մի շարք ապրանքատեսակների մասով արտոնյալ դրույքաչափերի կիրառման քվոտավորման մեխանիզմի ներդրում</p>			
	<p>6.5 Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ արտոնյալ առևտրային ռեժիմների առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում</p>	<p>Յուրաքանչյուր տարի Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության շրջանակներում նախատեսվում է ազատ առևտրի համաձայնագրերի կնքման նպատակով՝ առնվազն 2 երկրների հետ սկսել բանակցությունների վարում և համաձայնագրի կնքում, որոնց շրջանակներում անդամ պետությունները կստանան արտոնյալ առևտրային ռեժիմների կիրառման հնարավորություններ՝ երրորդ</p>	<p>Պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2021-2026 թթ. ավարտը 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>	

			<p>երկրների հետ առևտրի շրջանակներում: Նշված միջոցառումների իրականացումը լրացուցիչ խթան կհանդիսանա համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման գործընթացի համար, ինչպես նաև արտոնյալ առևտրային ռեժիմների կիրառման պարագայում՝ կապահովի տվյալ երկրների շուկաներում հայկական արտադրանքի դիրքավորումը:</p> <p>Նշված միջոցառման իրականացումը լրացուցիչ խթան կհանդիսանա համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման գործընթացի համար, ինչպես նաև արտոնյալ առևտրային ռեժիմների կիրառման պարագայում տվյալ երկրների շուկաների մշտադիտարկում, հայկական արտադրանքի դիրքավորում</p>			
	<p>6.6 ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում խոչընդոտների և արգելքների բացահայտում և վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում</p>	<p>Յուրաքանչյուր տարի առնվազն երկու խոչընդոտների կամ արգելքների բացահայտման և վերացման մասով աշխատանքների իրականացում և առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև դրանց լուծման ուղղությամբ քայլերի ձեռնարկում՝ ներգրավելով ՀՀ առևտրական ներկայացուցիչներին:</p> <p>Խոչընդոտների և արգելքների գույքագրված ցանկի առկայություն, դրանց լուծման ուղղությամբ իրականացված</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2021-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>	

			քայլերի մշտադիտարկում՝ ներգրավելով ՀՀ առևտրական ներկայացուցիչներին	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին		
		6.7 ՀՀ և այլ երկրների առևտրային հարաբերությունների զարգացման ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում	Յուրաքանչյուր տարի նվազագույնը 5 երկրների հետ առևտրատնտեսական կապերի ընդլայնման ճանապարհային քարտեզի մշակում, վերջիններիս շուկաներում հայրենական ապրանքների ներկայացվածության ապահովում: Հայ արտահանողների համար այդ երկրների շուկաներ մուտք գործելու առանձնահատկություններին և կարգավորումներին նվիրված խորհրդատվական-տեղեկատվական միջոցառումների կազմակերպում, տեղեկատվական փաթեթների պատրաստում և տարածում:	Պետական եկամուտների կոմիտե	2021-2023թ.թ. Դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ  2024-2026թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
7	Արդյունաբերության զարգացում՝ ոլորտին ուղղելով 80 մլրդ ֆինանսական միջոցներ  Մշակող արդյունաբերություն/ՀՆԱ՝ 15%,  Տնտեսական բարդության ցուցանիշը՝ -0.3-ից հասցնել 0.1-ի	7.1 Արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների (1. Ոսկերչություն և ադամանդագործություն, 2. Թեթև արդյունաբերություն (սնունդ, տեքստիլ և այլն), 3. Ծանր արդյունաբերություն (լեռնամետալուրգիա, քիմիա), 4. Սարքաշինություն (սարքեր, մեքենաներ, արևային տեխնոլոգիաներ), 5. Դեղագործություն) հայեցակարգի մշակում և իրականացում, գերակա ոլորտների ռազմավարությունների հաստատում	Արդյունաբերության զարգացման նպատակով բարձր ներուժ ունեցող գերակա ոլորտների սահմանում և պետական գործիքակազմի կիրառմամբ առաջնորդում  Արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների (1. Ոսկերչություն և ադամանդագործություն, 2. Թեթև արդյունաբերություն (սնունդ, տեքստիլ և այլն), 3. Ծանր արդյունաբերություն (լեռնամետալուրգիա, քիմիա), 4. Սարքաշինություն (սարքեր, մեքենաներ, արևային տեխնոլոգիաներ), 5. Դեղագործություն) հայեցակարգը		Հայեցակարգի հաստատման ժամկետ 2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ Ոլորտների ռազմավարությունների հաստատումը՝ 2022թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի

		և ռազմավարությունները հաստատված են			
		Արդյունաբերության զարգացման սահմանված գերակա ոլորտների մասով վերապատրաստման կենտրոնների ցանկի հաստատում և դասընթացների ֆինանսավորում			
	7.2 Մշակող արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու և ժամանակակից սարքավորումների ձեռքբերմանը նպաստելու նպատակով ֆինանսական, տեղեկատվական և մի շարք այլ աջակցության գործիքակազմի ծրագրի ընդունում	<p>Մշակող արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունները հնարավորություն կստանան տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու և ժամանակակից սարքավորումների ձեռքբերմանը նպաստելու նպատակով օգտվել պետության կողմից իրականացվող աջակցության գործիքակազմից:</p> <p>Իրավական ակտերի ընդունումն ըստ անհրաժեշտության Աջակցության գործիքների տրամադրման, տեղեկատվության աջակցության տրամադրման շրջանակի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում</p>		2021-2026 թթ., ավարտը՝ 2026թ., դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
	7.3 Արդյունաբերական 3 գոտիների որպես ենթակառուցվածքների և միջավայրի գերազանցության կենտրոնների հիմնման փաստաթղթի մշակում և իրականացում, «Արդյունաբերական 3 գոտիների որպես ենթակառուցվածքների և միջավայրի գերազանցության կենտրոնների հիմնման հայեցակարգի հաստատման	Հայաստանում զարգացած արդյունաբերական գոտիների առկայություն:		Իրավական ակտի հաստատումը 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի

		մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում				
		7.4 Տնտեսական բարդություն ապահովող արտադրությունների աջակցության կառուցակարգի և գործիքակազմի ծրագրի մշակում և իրականացում, «Տնտեսական բարդություն ապահովող արտադրությունների աջակցության կառուցակարգի և գործիքակազմի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	Միջնաժամկետ հատվածում տնտեսական բարդության ցուցանիշը -0.39-ից հասցնել 0.1 միավորի և ստեղծել հիմքեր՝ 10 տարվա ընթացքում դասվելու բարձր տնտեսական բարդություն ունեցող երկրների շարքին: Արտահանվող ապրանքի տնտեսական բարդության ցուցիչը կգերազանցի ՀՀ միջին ցուցիչը	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2021-2026թ., Իրավական ակտի ժամկետը՝ 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
		7.5 Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտների զարգացում, «Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտների զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	1. Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացման ռազմավարությանը և դրանից բխող միջոցառումների ծրագրի մշակում և իրագործում  2. Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտի համար մեկական կլաստերի ստեղծում, որը ոլորտի տնտեսավարողների համար կստեղծի տնտեսական գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիություն		Իրավական ակտի հաստատման ժամկետը 2022թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
8	Կանաչ և կայուն տնտեսական զարգացում  Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի արտադրությունում հասցնել 50%,	8.1 Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակում և հաստատման դեպքում՝ դրա իրագործում	Ռազմավարությամբ հստակ արտացոլված կլինեն կանաչ և կայուն տնտեսության զարգացման ուղղությունները և նախատեսվող գործողությունների շրջանակը, ինչպես նաև կանաչ տնտեսության խթանման և կայուն զարգացման	Շրջակա միջավայրի նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Բարձր տեխնոլոգիական	Կանաչ և կայուն տնտեսության զարգացման ռազմավարության մշակումը՝ 2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի

	<p>Էլեկտրական շարժիչով մեքենաների մասնաբաժինը հասցնել 10%</p>		<p>երկարաժամկետ նպատակների իրագործման մեխանիզմները: Արևային տեխնոլոգիաների զարգացում, արտադրության խթանում: Կանաչ և կայուն տնտեսության զարգացման ճանապարհային քարտեզի հաստատում և իրագործում Ածխածնազերծ ապրանքների թողարկման խթանում, Ըստ անհրաժեշտության համապատասխան իրավական ակտերի հաստատում</p>	<p>արդյունաբերության նախարարություն</p>		
	<p>8.2 Արևային էներգետիկայի համար տեխնոլոգիաների զարգացում, արտադրության խթանում: Ըստ անհրաժեշտության համապատասխան իրավական ակտերի ընդունում</p>	<p>Արևային էներգետիկայի՝ արևային պանելների և արևային տեխնոլոգիաների ոլորտի ուսումնասիրության իրականացում: Արևային էներգետիկայի սարքերի արտադրության զարգացման ծրագրի ընդունում</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2022-2024թթ. ավարտը 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ  2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
	<p>8.3 Էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի իրականացում</p>	<p>Էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների զարգացման ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	<p>2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի  Դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ</p>

		<p>8.4 Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծում, «Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և հաստատում</p>	<p>Հայեցակարգի մշակում և տնտեսական օգուտների վերհանում Ճանապարհային քարտեզի հաստատում և իրագործում</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>2022-2025թթ.  Ճանապարհային քարտեզի հաստատման ժամկետ՝ 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ,  ՀՀ կառավարության որոշման հաստատումը՝ 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի կամ դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ</p>	
		<p>8.5 Կանաչ ջրածնի արտադրության զարգացում</p>	<p>Կանաչ ջրածնի արտադրության հնարավորության ուսումնասիրության իրականացում, կանաչ ջրածնի արտադրության զարգացման նախադրյալների ստեղծում</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2023-2026թթ. ավարտը</p> <p>Կանաչ ջրածնի արտադրության հնարավորության ուսումնասիրության իրականացում՝ 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>Ըստ անհրաժեշտության՝ ճանապարհային քարտեզի մշակում՝ 2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի կամ դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ</p>

		8.6 Կանաչ տաքսոնոմիայի մշակում և հաստատում	ՀՀ-ի համար կանաչ տաքսոնոմիայի շրջանակի մշակում և ՀՀ կառավարության կողմից վերջինիս հաստատում	Շրջակա միջավայրի նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի կամ դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ
9	Գյուղատնտեսության զարգացում և արտադրողականության բարձրացում  ԳՀԱ՝ 1.4 տրլն դրամ  Անմշակ վարելահողերը < 120 հազար հա	9.1 ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության իրականացում	ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքը հասցնել շուրջ 1,4 տրիլիոն դրամի, 2020 թվականի 819.3 մլրդ դրամի դիմաց, 2023թ.-ին՝ շուրջ 1 տրիլիոն դրամի, 2024թ.-ին՝ շուրջ 1.1 տրիլիոն դրամի  Գյուղացիական տնտեսությունների թիվը կրճատել՝ մինչև 280000-ի, ներկայումս գործող 317000-ի դիմաց, 2023թ.-ին՝ 300000-ի, 2024թ.-ին՝ 295000-ի  Տարեկան կտրվածքով մեկ գյուղացիական տնտեսության ստեղծած արժեքը հասցնել շուրջ 4.5 մլն ՀՀ դրամի, 2023թ.-ին՝ շուրջ 3 մլն ՀՀ դրամի, 2024թ.-ին՝ շուրջ 3.5 մլն ՀՀ դրամ  Մշակովի դարձնել վարելահողերի շուրջ 75 %-ը, 2023թ.-ին՝ շուրջ 57 %-ը, 2024թ.-ին՝ շուրջ 60%	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Շրջակա միջավայրի նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Կադաստրի կոմիտե  Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին  Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ)	2022-2026թ.թ. ավարտը 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի կամ դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ



			<p>Ագրոպարենային արտադրանքի արտահանման ծավալը կրկնապատկել կամ ապահովել տարեկան 20% աճ:</p>			
	<p>9.2 Բուսաբուծության ճյուղի զարգացման խթանում</p>	<p>Յուրաքանչյուր տարի առնվազն 1000 հա ինտենսիվ այգիների հիմնում</p> <p>տեղական սերմնաբուծության և սերմարտադրության իրականացման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի առկայության ապահովում</p> <p>տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրում</p> <p>ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի տարածքների ավելացում</p> <p>արդիական տեխնոլոգիաներով ջերմատնային տնտեսությունների տարածքների ընդլայնում՝ վարկային լիզինգային և փոխհատուցման գործիքներով տարեկան մինչև 10 հա</p> <p>տարեկան շուրջ 500 միավորով գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացում</p> <p>գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության համակարգի ամբողջական ներդրում</p>	<p>Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) Մարզպետարաններ</p> <p>«Գյուղատնտեսությունն ապահովագրողների ազգային գործակալություն» ՀԿ (համաձայնությամբ)</p> <p>Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ),</p> <p>«Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղ (համաձայնությամբ),</p> <p>ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում ծրագիր (համաձայնության)</p> <p>Առողջապահության նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Համապատասխան ոլորտը համակարգող փոխվարչապետի գրասենյակ</p>	<p>2022-2026թ.թ. ավարտը 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի կամ դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ</p>	

			<p>Ազգային անվտանգության ծառայություն</p> <p>Ոստիկանություն</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p> <p>«Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ Շուկայի վերահսկողության տեսչական մարմին»</p>		
	9.3 Անասնաբուծության ճյուղի զարգացման խթանում	<p>Տոհմային գործի բարելավում՝ տարեկան 10-15 %-ով տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացում</p> <p>գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում</p> <p>Երեք տարիների ընթացքում (2023-2025թթ.) նախատեսվում է 739500 համարակալման միջոցառման իրականացում, այդ թվում 2023թ.՝ 686500 միջոցառում, 2024թ.՝ 195400 միջոցառում</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>«Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ»</p>	2022-2024թթ. ավարտը 2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ «Վ կառավարության կողմից հաստատված ծրագրի կամ դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ

			<p>տարեկան շուրջ 25 միավոր խելացի անասնաշենքերի կառուցման խթանում</p>	<p>Մարզպետարաններ</p>		
		<p>9.4 Ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման խթանում</p>	<p>Մեծածախ շուկաների, լոգիստիկ կենտրոնների, արտահանման հիմնական շուկաներում հավաքական պահեստների ստեղծմանն աջակցության միջոցով առնվազն 1 մեծածախ շուկայի կամ լոգիստիկ կենտրոնի և առնվազն 2 հավաքական պահեստի ստեղծում</p> <p>Հումքի մթերման գործընթացին, կոնյակի ու կոնյակի սպիրտի արտահանմանն աջակցություն, ինչպես նաև գինեգործության ու կոնյակագործության արտադրության խթանման արդյունքում առաջիկա 5 տարիներին հումքի մթերման և թողարկվող արտադրանքի ծավալների ավելացում մինչև 50 %-ով կամ տարեկան շուրջ 10%-ով</p> <p>Գյուղատնտեսական հումք մշակող ընկերությունների արտադրական կարողությունների հզորացում և արդիականացում՝ տարեկան շուրջ 250 միավոր սարքավորումների ձեռքբերմանն աջակցություն</p>	<p>«ՀՀ խաղողագործության և գինեգործության» հիմնադրամ (համաձայնությամբ)</p> <p>Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ)</p> <p>Հավատարմագրման ազգային մարմին,</p> <p>Երևանի պետական համալսարան (համաձայնությամբ),</p> <p>Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (համաձայնությամբ),</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p>	<p>2022-2026թ.թ. ավարտը 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի կամ դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ</p>

			<p>Գինեգործական արտադրանքի ճանաչելիության բարձրացման միջոցառումների միջոցով 2 անգամ արտահանման ծավալների ավելացում կամ տարեկան 20%-ով աճ</p> <p>Աշխարհագրական նշումների մասին օրենքի բարելավման միջոցով ոլորտային ասոցիացիաների ստեղծման խթանում և տարեկան 2-3 անվանում հայկական նշումներով արտադրանքի արտադրություն և գրանցում</p>	<p>Արտաքին գործերի նախարարություն</p> <p>«Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ,</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p>	<p>2023-2026թթ., ավարտը 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	
	<p>9.5 Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակում</p>	<p>1. Պարենային անվտանգության համակարգի հետագա զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի առկայություն, որով կնախանջվեն համակարգի հետագա կայուն և համաչափ զարգացումն ապահովող համապատասխան միջոցառումները, և կապահովվի պարենային անվտանգության մակարդակի հետագա բարձրացումը</p> <p>2. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ տարեկան շուրջ 7000 վարկ՝ 20-30 մլրդ դրամ գումարով</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Առողջապահության նախարարություն,</p> <p>Արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>«Վարչապետի աշխատակազմի</p>	<p>1. Ռազմավարության հաստատման ժամկետը 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2. 2022թ.</p>		<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

			<p>տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p> <p>Մարզպետարաններ</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Անվտանգության խորհրդի գրասենյակ</p>		
	<p>9.6 Սննդամթերքի անվտանգության ապահովում «Սննդամթերքի անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության ապահովում</p> <p>Սննդամթերքի անվտանգության ռազմավարության մշակում</p>	<p>Առողջապահության նախարարություն,</p> <p>ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p>	<p>2022-2026թթ Ռազմավարության ներկայացման ժամկետը՝ 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
	<p>9.7 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում</p>	<p>Վնասակար օրգանիզմների ներթափանցման և (կամ) տարածման կանխում, գյուղատնտեսական նշանակության հողերի բուսասանիտարական վիճակի բարելավում: 2023 թվականին նախատեսվում է վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով իրականացնել 180 000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի</p>	<p>Մարզպետարաններ</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p>	<p>2022-2026թթ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>

